ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԸ ԵՎ XVIII Դ. ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

Դավիթ Անհաղթի ազդեցությունը XVIII դ. գրական կյանքի վրա դրսևորվում է ուղղակի և անուղղակի, տեսական և գործնական առումներով։ Պատմական այդպիսի կապի և ազդեցության շատ ուշագրավ օրինակներ են մեզ տալիս դարի գրական վերանորոգության շարժման գործիչներ Խաչատուր Էրզրումեցին, Մխիթար Սեբաստացին, Հովհաննես Բաղիշեցին, Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին, Հակոբ Նալյանը, Սիմեոն Երևանցին, Ղազար Ջահկեցին, Պետրոս Նախիջևանցին, Մեսրոպ Գանձակեցին, Շահամիրյանները, Հարություն Շմավոնյանը, Ստեփանոս Ագոնցը, Թադեոս Ջուղայեցին և ուրիշներ։

Դավիթ Անհաղթի ուսմունքի ընդհանուր ազդեցության (արևմտաեվրոպական տեսական-փիլիսոփայական մտքի միջնորդությամբ) առաջին կրողը XVIII դ. Խաչատուր Էրզրումեցին է (նաև՝ Խաչատուր Կարնեցի, Խաչատուր Առաքելյան)։ Իբրև փիլիսոփա, տնտեսագետ, արվեստագետ, մարդու իրավունքի, ազատության հարցի առաջին տեսաբան, իբրև ճարտասան, քերականագետ, գիտական-փիլիսոփայական ուսուցողական բանաստեղծության հիմնադիր Խաչատուր Էրզրումեցին երևույթ է XVIII դ. հայ գրական վերանորոգության շարժման պատմության մեջ։ «Խաչատուրը առաջին մարդն էր, որ միջնորդ հանդիսացավ արևմտյան գիտության և հայերի մեջ... Այս նշանավոր աշխատությունը,— գրում է Լեոն նրա «Համառոտական իմաստասիրութիւն» ոտանավոր երկհատորյակի մասին,— ինչպես նաև Խաչատուրի մյուս գործերի մեծ մասը, ազգի սեփականությունը դարձան XVIII դարում... Գիտությունների մի ամբողջ ժողովածու, մի ամբողջ հանրագիտակ, որի վրա հայ ընթերցողը պիտի խելամուտ լինի այն ամենին, ինչ տալիս էր եկեղեցուն ստրկացած փիլիսոփայությունը։ Մեծ չէր այս հարստությունը հանրամարդկային առաջադիմության տեսակետից, բայց հայկական աղքատ ու տգետ իրականության համար մի մեծ բարիք էր, որովհետև, այնուամենայնիվ, եվրոպական միտքն էր ներկայացնում և տալիս էր այնպիսի հասկացողություններ, որոնք բոլորովին անհայտ նորություններ էին մեր այն ժամանակվա մտավոր կացության մեջ»[1]։

Խ. Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն» ոտանավոր երկհատորյակի տեսական, գիտական օրենքների ու սահմանումների վրա («Ցաղագս սահմանի», «Ցաղագս սահմանի արուեստի», «Ցաղագս սահմանի հռետորութեան», «Ցաղագս սահմանի տրամաբանութեան», «Ցաղագս սահմանի մարդոյ», «Ցաղագս սահմանի բժշկութեան», «Ցաղագս սահմանի բարոյականութեան» և այլն) նկատվում է գեղագիտության, ճանաչողական և մտածողական ձևերի ու եղանակների, գիտության, փիլիսոփայության, բարոյա-

---

[1] Լեո, Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1902, էջ 178, նույնի՝ Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1946, էջ 976։

կանության վերաբերյալ Դավիթ Անհաղթի հեղափոխիչ ուսմունքի ընդհանուր ազդեցությունը: «Քանզի ամենայն մակացութիւն է ընդունելի և սիրով ընդգրկելի և քանզի ամենայն արուեստ ի յինքենէ շահաւէտ և օգտակար և զայս իմաստասիրական գործս, որ գրկէ զարուեստս և զգիտութիւնս, իմաստասիրութեան ձերում յանձն առնեմ և խնդրեմ ի ձէնջ, զի խոնարհեցեալք պտղաբերաբար զնա վայելեցէք»[2],— դիմում է Խ. Էրզրումեցին իր ընթերցողին։ Հայոց ազգը ավելի քան կարիք ունի գիտության լույսին, գրում է նա, «քանզի է՝ ի մէջ այլազգաց և է՝ ի մէջ գերութեան, վասն այսորիկ առաւել հարկաւոր են հայոց ազգին ուսմունք, քանզի սոքա առաւել կարեն յաղթել զթշնամիս... ուստի պարտիմք ջանալ առաւել ի մահ մտանիլ, քան թէ ի բաց լինիլ յուսմանց, գրոց...։ Գիտութիւն. ըստ ինքեան իմացեալ լոյս է. և ցուցանէ մեզ զչարն և զբարին. զչարն իբրև խոտելի և բարին իբրև գրկելի, և ընդունելի, և սիրելի»[3]։

Գիտությունը, իմաստասիրությունը, գրում է Դավիթ Անհաղթն իր «Սահմանքում», կատարելագործում է մարդուն, լցնում նրա հոգին բարությամբ, առաքինությամբ, «փուիոխելոյ զնա ի նիւթային և ի մառախլապատ կենցաղոյ», առաջնորդում է նրան դեպի բարձր գաղափարների իշխանություն։ «Եւ պարտ է գիտել, եթէ մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ... կատարեալ իմաստասէրն խնամ տանի անկատար ոգւոց ի կատարեալ գիտութիւն ածելով զնոսա»[4]։ Խ. Էրզրումեցին զարգացնում է այս գաղափարները իր տեսական օրենսդիր բանաստեղծության էջերում։ Նա մարդուն գնահատում է իբրև կենդանական աշխարհի բարձրագույն գոյ, իբրև անբան կենդանի էակների առաջնորդ, բանական ուժ, բնորոշում է մարդ-բանականի բարձր կոչումը, մեկնաբանում է իմաստասերի ու իմաստասիրության, գիտնականի ու գիտության, մտավորի և մտավորականության գործնական դերը մարդկային, հասարակական հարաբերությունների կարգավորման հարցերում.

Իմաստասէրք յարանուանին,
Որք իմաստութեան հետևին...
Զկերպ գիտելոյ կանոնեն,
Առ գիտութիւն առաջնորդեն.
Եւ զբնութիւնս իրաց քննեն,
Զյատկութիւնս նոցին որոնեն[5]։

«Եւ արդ վասն զի իմաստասիրութիւն է առաջիկայս մեզ և գեղեցկագոյն և պատուականագոյն ամենայն գործոց մարդկան»[6],— կարդում ենք Անհաղթի «Սահմանքում»։ Գիտությունը իմաստասիրություն է, «զարդ հոգւոյ»,— դրում է Խ. Էրզրումեցին իր ոտանավոր իմաստասիրության մեջ, այն դերաղանց է՝

---

2 Խաչատուր Էրզրումեցի, Համառոտական իմաստասիրութիւն, առաջին հատոր, Վենետիկ, 1711, «Բան առ ընթերցողս»։

3 Խաչատուր Էրզրումեցի, Գիրք քերականութեան, էջմիածին, 1696, էջ 14, 16 (այս և հետագա ընդգծումները մերն են)։

4 Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 41, 47։

5 Խաչատուր Էրզրումեցի, Համառոտական իմաստասիրութիւն, առաջին հատոր, էջ 539, 540։

6 Դաւիթ Անյաղթ, նշվ. աշխ., էջ 31։

Եւ քան զպատուական ակունս,
Եւ քան զիշխանութիւնս բարձունս...
Եւ քան զփառս գերազանցագոյն,
Եւ քան զաթոռս լաւագոյն,
Եւ քան զփարթամութիւն, հարստութիւն[7]։

Փիլիսոփա հանրագետը տեսականորեն զարգացնում, հիմնավորում է գիտությունը կյանքին մոտեցնելու, գիտության և կյանքի կապը ուժեղացնելու, գիտնականի խոսքի և գործի միջև եղած անջրպետը վերացնելու հարցերը։ Դավիթ Անհաղթի բնութագրած «մտաց և հանճարի ընդունակ» մարդիկ, ըստ Խ. Էրզրումեցու, պարտավոր են՝

Որպէս իմաստասիրութեամբ փայլին,
Այսպէս և սուրբ գործովք պճնին...
Որպէս ի գիրս պայծառանան,
Այսպէս ի գործս ազնուանան։
Որպէս գրովք այլոց օգնեն,
Այսպէս և գործովք սատարեն։
Որպէս զմիտ լուսաւորեն,
Այսպէս նաև զկամն ուղղեն...
Եւ զոր լեզուաւ վարդապետեն,
Օրինակօք զնա հաստատեն[8]։

Երբեմն, կարծեք թե Խ. Էրզրումեցին ուղղակիորեն կրկնում է Դավիթ Անհաղթի տեսական առանձին բանաձևերն ու օրենքները՝ պարզունակ ոտանավոր ձևի մեջ առնելով դրանք։ «Ծկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք,— կարդում ենք Դավիթ Անհաղթի «Սահմանքում»,— թէ զի՞նչ է սահման։ Սահման է բան կարճառօտ, յայտնիչ բնութեան ենթակայ իրի»[9]։ Խ. Էրզրումեցին «Ցաղագս սահմանի» ոտանավոր-տրակտատում գրում է.

Զի և սահման զիր ցուցանէ,
Զիրի բնութիւն նշանակէ...
Սահման է յայտնիչ բնութեան,
Եւ բացայայտիչ էութեան,
Քանզի զբնութիւն իրի յայտնէ,
Զէութիւն նորա ցուցանէ[10]։

Խ. Էրզրումեցին իր ուսուցողական բանաստեղծության էջերում ընդգրկում է աշխարհի ճանաչողության նոր հորիզոններ, զարգացնում է իր նախորդներին՝ շոշափելով մարդու բարոյական, անձնական, իրավական

---

7 Խաչատուր Էրզրումեցի, Համառօտական իմաստասիրութիւն, առաջին հատոր, էջ 540։

8 Նույն տեղում, էջ 544։

9 Դաւիթ Անյաղթ, նշվ. աշխ., էջ 40։

10 Խաչատուր Էրզրումեցի, Համառօտական իմաստասիրութիւն, առաջին հատոր, էջ 120։

ազատության շատ հարցեր՝ հարկավ նոր, բուրժուական լուսավորության ու մարդասիրության դիրքերից։ Միայն անարդար իրավունքը, անմարդկային կրքերը, հարստանալու մոլուցքը, ընչաքաղցությունը, ազգերի ստրկացման ձգտումները, ուրիշի վաստակին տիրելու, աղքատների արյամբ հարստանալու կրքերն են ծնում բռնի իշխանություն, բռնապետական կարգ, գրում է Խ. Էրզրումեցին «Յաղագս քաղաքականութեան» ոտանավոր ընդարձակ բաժնում։ Խ. Էրզրումեցու փիլիսոփայության մեջ բարձրացրած տնտեսական-քաղաքական առանձին խնդիրները չեն կորցրել իրենց հնչեղությունը։ Պատերազմի մասին նրա տեսությունը ընդունելի է և այսօր։ Խ. Էրզրումեցին տարբերում է պատերազմի երկու տեսակ՝ արդարացի, պաշտպանողական և անիրավ, անարդար, հարձակողական, զավթողական պատերազմ։ Հարձակողական պատերազմը, ըստ Խ. Էրզրումեցու, չարիք է մարդկային հասարակության համար, քանզի՝

Այրէ, կիզէ և հրդեհէ,
Հրով ծախէ և սպառէ,
Զազատ անձինս գերիս վարէ,
Նաև ծառայեցուցանէ...
Անգթաբար վրէժ խնդրէ,
Առանց չափոյ պատուհասէ...
Քանզի անիրաւ դատանի,
Եւ իրաւանց հակառակի,
Վասն որոյ՝ դատապարտելի,
Ատելի, արհամարհելի[11]։

Խ. Էրզրումեցու այսպես կոչված պրակտիկ փիլիսոփայության հիմքում ընկած է բուրժուական մարդասիրությունը և արդարության ըմբռնումը, իրավացիորեն ընդգծում է պրոֆ. Հ. Գաբրիելյանը։ «18-րդ դարում,— գրում է նա,— երբ հանգամանքները փոխվեցին, երբ հայ ժողովուրդը քաղաքական մեծ զարթոնք սկսեց ապրել, ապա նրա տեսական մտքի լավագույն տրադիցիաները նորից վերականգնվեցին և իրենց ազդեցությունը ունեցան նաև Առաքելյանի վրա»[12]։ Խաչատուր Էրզրումեցիով է սկսվում նոր ժամանակների արվեստի, գրականության, փիլիսոփայության, բնագիտության, տնտեսագիտության, բարոյագիտության, տեսական մտքի պատմության հետ կապված հարցերի մուտքը ուսուցողական բանաստեղծության մեջ։ Նրա կյանքի ու գործունեության, գիտական հարուստ վաստակի մասնագիտական, արդարամիտ քննության և ուսումնասիրության դեպքում չոչափելի կդառնա այն խոր ազդեցությունը, որ նա կրել է հայ ազգային դասական գիտությունից ու փիլիսոփայությունից և այն նորը, որ նա ստացել է արևմուտքից՝ ի նպաստ XVIII դ. հայ ազգային վերանորոգության շարժման։

XVIII դ. նշանավոր բանաստեղծներից Պաղտասար Դպիրն էր առաջինը, որի քնարական երգերում վեր բարձրացավ Դավիթ Անհաղթի տիտանական

---

11 Նույն տեղում, էջ 661։

12 Հ ե ն ր ի Գ ա բ ր ի ե լ յ ա ն, Հայ փիլիսոփայության մտքի պատմություն, հ. II, Երևան, 1958, էջ 340։

կերպարը։ Բանաստեղծ-երգահանը Անհաղթի գրական ժառանգության նկատմամբ ցուցաբերում է արտակարգ և բազմակողմանի հետաքրքրություն։ Նա է Դավիթ Անհաղթի երկերի առաջին գիտական հրատարակիչը, անտիկ փիլիսոփայության միտքը Դավիթ Անհաղթի միջոցով Կ. Պոլսի միջավայրում տարածողներից մեկը։ Նրա «Համառօտ իմն մեկնութիւն յաղագս տրամաբանութեան» ձեռագիր աշխատության (Մատենադարանում պահվում են այդ երգի 9 գրչագիր օրինակներ) և այլ երկերի մասնագիտական ուսումնասիրությունը կբացահայտի նաև Պաղտասար Դպիր իմաստասերի դիմագիծը։

Պաղտասար Դպիրը Դավիթ Անհաղթի ոչ միայն գրական ժառանգության առաջին հրատարակիչն է, այլև առաջին ներբողագիրը, բանաստեղծ-մեկնիչը, կենսագիրը։ Քաջատեղյակ լինելով անցյալ դարերի ձեռագիր մատյաններում մեծ փիլիսոփայի մասին եղած նյութին, նա ընթերցողին ներկայացնում է Դավիթ Անհաղթի սեղմ կենսագրությունը[13]։ Դավիթ Անհաղթի կենսագրությանը հարակից Պաղտասար Դպիրը ընթերցողին է ներկայացնում նաև մեծ իմաստասերի շուրջը հյուսված և ավանդությունից գրական կյանք մտած զրույցներից մեկը, որին կանդրադառնանք առանձին։ Պատմաավանդական նյութերով համեմված, Դավիթ Անհաղթի կյանքի ու կենսագրության նկարագրից հետո Պաղտասար Դպիրը բերում է «Դաւիթ» տնակապով իմաստասերին նվիրված իր բանաստեղծություն-ներբողը։ Բարձրաշունչ, հանդիսավոր ոճով բանաստեղծը ներկայացնում է Դավիթ Անհաղթի կատարած մեծագույն դերը ոչ միայն հայոց, այլև ընդհանուր փիլիսոփայության պատմության մեջ.

Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ,
Ծաղիկ բուսեալ ցեղինս Հայկայ,
Ծրծեալ զիմաստն ի յԱթենայ,
Գեր քան զհելլենսըն ճոխանայ։
Արար ըղդիրքըս սահմանաց,
Սահմանելով ի վեց դիմաց,
Ցոյց թէ գո՛յ իմաստ մըտաց,
Իմաստուրաց իմաստակաց[14]։

Պաղտասար Դպիրը անդրադառնում է նաև Դավիթ Անհաղթի «Չարն ոչ է անեղ» տեսության մեկնաբանությանը, բացահայտելով այն միտքը, թե մարդկային թույլ կամքն է չարի արարիչը և որ դրա դեմ մաքառելու ամենամեծ դեղամիջոցը գիտությունն է, իմաստասիրությունը, կրթությունը։ Պաղտասար Դպիրը, առաջին անգամ միջնադարյան բանաստեղծության մեջ, չափաբերում է Դավիթ Անհաղթի վերոհիշյալ տրակտատը.

Որք բընախօս բանիւ զէակքս ենթագրեցին,
Ամենայն չար գոլ տանջելի ճշմարտեցին,
Ո՛չ ոք տանջեալ անապական վերաբերին.
Զի յեղեղուտ է բնութեամբ ըստ իւր գոյին...

---

13 «Դիրք սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի և աստուածաբան վարդապետի», Կ. Պոլիս, 1731, էջ 336։

14 Նույն տեղում, էջ 339։

Ըստ բնութեան ո՞չ ոք է չար և ո՞չ լինին,
Եւ զի չարն է առարկութիւն որ փոփոխին,
Առարկութիւն գոյացութիւն ո՞չ է բնաւին,
Ուրեմն, ապա գոյացութիւնք չար ո՞չ ասին[15]։

Բնախոսները կամ նրանք, որոնք զբաղվել են իրերի, գոյի էության քննությամբ ու նկարագրությամբ, այն ճշմարիտ եզրակացությանն են հանգել, թե չարը գոյակցություն չէ։ Գոյակցությունները չար չեն լինում, չարը առարկայի որակն է, հատկանիշը, որ ստանում է դրսից. չարը ենթակա է փոփոխության, ոչ ոք էությամբ չար չի ծնվում, անարդար բարքերի ու հարաբերությունների մեջ է մարդը չար դառնում, հետևաբար չարը մերժելի է, տանջելի, անհանդուրժելի։ Բարին չարի հակադրությունն է և ոչնչով հավասար չէ նրան, ներհակությունները հավասար չեն լինում, բացահայտում է Պաղտասար Դպիրը Դավիթ Անհաղթի հիշյալ տրակտատի էությունը.

Որք ներհականք ոչ ինչ իրօք հաւասարին,
Որպէս ճերմակն ոչ ունի ինչ հանգէտ սևին,
Ա՛րդ, բարութեան գոյացութիւն անեղն ասի,
Բաց յանեղէն եղականաց ոչ պատկանի։

Քանզի բարի թէպէտ բազմեաց ոգեալ լինի,
Բայց բարութիւն հազիւ կամ բնաւ ո՞չ ենթադրի,
Իսկ բարւոյն չարն է ընդդիմակ, որ ներհակի,
Ապա ուրեմն, ոչ ինչ ի յայն այս գրտանի[16]։

Գրեթե անծանոթ անուն է փիլիսոփա և բանաստեղծ Մեսրոպ Գանձակեցին, որը XVIII դ. ուշագրավ դեմքերից մեկն է (ձեռագրերում և ձեռագրական ցուցակներում հայտնի է նաև՝ Մեսրոպ Աղվանցի, Մեսրոպ Դպիր, երեց, սարկավագ, քահանա, վարդապետ, հռետոր, իմաստասեր և այլ անուններով)։ Դավիթ Անհաղթին նվիրած բանաստեղծությունը, որով նա գրավում է մեր ուշադրությունը, կրում է «Հին Ջուղայեցի Ստեփաննոս վարդապետի յաշակերտէն առ Դավիթ Անյաղթ փիլիսոփայն Հայոց» խորագիրը։ Մեզ հայտնի է այդ բանաստեղծության ձեռագիր մեկ ընդօրինակություն, որը պահվում է Մաշտոցյան Մատենադարանի № 1745 գրչագրում։ Այս ձեռագիրը ամենայն մանրամասնությամբ նկարագրել է Հակոբ Մանանդյանը իր «Հունաբան դպրոցը» հայտնի աշխատության մեջ։ Անվանի գիտնականը նկարագրության մեջ ներկայացնում է բանաստեղծության առաջին և վերջին տողերը միայն, նպատակ չունենալով անդրադառնալ նաև երգի հեղինակի հարցին։ Բանաստեղծությունը, տողերի հոդակապով՝ «Ի Մեսրոպէ է բանս», հայտնում է

15 Նույն տեղում, էջ 319։
16 Նույն տեղում, էջ 320։

Ըզբան Եռամեծին Դաւթի
Թէ ամենայն չար տանջելի,
Ոտիւք չափեալ ըստ իւր ըղձի,
Ուրումբն այս բանասիրի (Նույն տեղում, էջ 321)։

հեղինակի անունը։ Կենսագրական տեղեկություններ այդ անխոնջ գիտնականի վերաբերյալ գրեթե հայտնի չեն։ Բարեբախտաբար, իմաստասիրական, գիտական բովանդակությամբ մի շարք գրչագրերում պահպանվում են ուշագրավ փաստեր, որոնք քիչ թե շատ գաղափար են տալիս նրա գրական, գիտական գործունեության մասին։ Դավիթ Անհաղթին նվիրված վերոհիշյալ ներբողը մեզ հասել է այն ձեռագրով, որը Մեսրոպ Գանձակեցու ջանքերով վերստեղծվել, վերակազմվել է։ Այն եղել է «Սահմանքի» XIII դ.՝ հին, քայքայված, թերթերը մի կողմ նետված ձեռագիր։ Եվ ահա, Մեսրոպ Գանձակեցին 1733 թվականին Էջմիածնի մատենադարանում ձեռնամուխ է եղել նրա վերանորոգության, վերակազմման աշխատանքներին, լրացրել է պակաս էջերը և փրկել ձեռագիրը կորստից։ «Ես նուաստ և անպիտանս ամենայնի՝ Մեսրոպ սուտ անուամբ սարկաւագ, որ ոչ առնեն արժանի զիս մեղօք մածեալս աշակերտութիւն այսպիսի իմաստից... քանզի իմ նայելով զայս Գիրքս սահմանացն Դաւթի՝ ցրուեալ կայր իբր անպիտան. և ես բազում աշխատանօք իրար ձգեցի և պակասն գրեցի, սակս վայելման անձին իմոյ... գրեցաւ ՌՃՁԲ թվին հայոց, ապրիլի ամսոյ Ը. ի դրան մեծի վեհարանիս սուրբ էջմիածնի»[17]։ Մեսրոպ Գանձակեցին նպատակ է ունեցել Դավիթ Անհաղթի «Սահմանքի» հնագույն այդ օրինակի բնագրի վերակենդանացումը, ձեռագրի նոր կյանքը՝ նշանավորել Դավիթ Անհաղթին նվիրված բանաստեղծությամբ։ «Ի վայելման անձին իմոյ» արտահայտությունը կարծեք թե գրավականն է Մեսրոպ Գանձակեցու հետագա գործունեության։ Էջմիածնում և այնուհետև Իզմիրում, Կ. Պոլսում, Բրուսայում նա զբաղվել է փիլիսոփայությամբ։ 1730—1760-ական թվականներին Մեսրոպ Գանձակեցու գրչությամբ իրար հետևից ձեռագրական աշխարհ են մուտք գործում ու տարածվում իմաստասիրական մի շարք կարևոր գործեր՝ «Համառօտ մեկնութիւն առաջին Դաւթի փիլիսոփայի, արարեալ ի տառապեալ Մեսրոպայ Գանձակեցւոյ ի խնդրոյ ուրումն ուսումնասիրի Սեթայ սարկաւագի Երզնկացւոյ», «Համառօտ պարզաբանութիւն Գրոցն պատճառաց, արարեալ ի տառապեալ Մեսրոպայ Գանձակեցւոյ»[18], «Հարցմունք պէս պէս և պատասխանիք տեառն Մեսրոպայ...» (Պորփյուրի Ներածության Դավթի մեկնության մասին), «Մեկնութիւն «Վասն բաժանման» Դաւթի», «Ժողովեալ ի Մեկնութենէ կաթողիկեայց Սարգիս Շնորհալւոյ՝ այլ և միաւորեալ ըստ գրոց մերոցն վարդապետաց՝ Որոտնեցւոյ, Գրիգորիս Աղթամարցւոյ և Մաթէոս վարդապետի, ձեռամբ տառապեալ Մեսրոպայ Գանձակեցւոյ» և այլք։ Իր մեկնությունների կամ պարզաբանությունների, ինչպես նաև ընդօրինակությունների հիշատակարաններում Մեսրոպ Գանձակեցին հայտնում է բանասիրական ուշագրավ տեղեկություններ, որոնք օգտակար են ոչ միայն դարի հայ փիլիսոփայական մտքի պատմության, այլև իր՝ հեղինակի կյանքի և գործունեության ուսումնասիրության համար։ Մեկնողական աշխատանքի մեջ, նկատում է փիլիսոփան՝ բերելով Դավիթ Անհաղթի կարծիքը, մեծ չա-

---

17 Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 1745, թ. 115ա (այսուհետև՝ Մատենադարան)։

18 «Գիրք պատճառաց Արիստոտէլի կամ որպէս թուի ոմանց՝ Պրոկղի» երկը լատիներենից թարգմանել է Ստեփանոս Լեհացին, որը տպագրվել է 1750 թ. Կ. Պոլսում։ Մեսրոպ Գանձակեցու կարծիքով այս գրքի հեղինակը Պրոկղն է և ոչ Արիստոտելը։ «Շարագրութիւն սորա յաւէտ Պրոկղի յարմար երևի, քան թէ Արիստոտէլի»,— գրում է նա (նույն տեղում, ձեռ. № 3186, թ. 40ա-բ)։

փով դրսևորվում են նաև իր՝ մեկնողի փիլիսոփայական հայացքները, նրա անհատական վերաբերմունքը տվյալ գործի նկատմամբ, քանզի «ըստ իւրում կարծեաց ձևացուցանէ»։ Ոատի Մեսրոպ Գանձակեցին ևս իր մեկնությունների հիմնական նպատակն է համարում տվյալ երկի գաղափարները բացահայտել պարզ, մատչելի եղանակով։ Այսպես, օրինակ, նա դժվարամարս և խճողված է համարում 1750 թ. Կ. Պոլսում հրատարակված «Գիրք պատճառաց» երկը, ուստի ձեռնամուխ է լինում այդ երկի նոր շարադրանքին։ «Յայտ լիցի ուսումնասիրողացդ,— գրում է Մեսրոպ Գանձակեցին իր մեկնության «Առ բարեմիտ ընթերցողսդ» առաջաբանում,— զի ասէ մեծն Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն ի մեկնութեան վեց գլուխն Պորփիւրի, թէ՝ պղատոնական տեսութիւնք դժուարք են և խորինք զամենայն կարծիս հուպ անկեալք և զի այսպէս գոյ. յայտ է, զի ամենայն մեկնող ըստ իւրում կարծեաց ձևացուցանէ։ Նոյնպէս և մեք ըստ կարողութեան մերոյ այսպէս ձևացուցաք զմեկնութիւն սորա, յառաջնորդութեամբ սուրբ և ուղղափառ վարդապետացն Հայոց. վասն զի ի թուին Հայոց հազար երկու հարիւր և երկուցն, ես տառապեալ Մեսրոպ անարժան քահանայ և կրօնաւոր, եկի մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս և տեսի զգիրք զայս Պատճառաց տպագրեալ, բայց՝ յաղագս նրբութեան սորա և դժուարիմաց գոլոյն, սակաւ թէ ոք ըստանայր զսա, վասն որոյ ըստիպեալ եղէ յեղբարց ոմանց ուսումնասիրաց. դիւրացուցանել զտեսութիւն սորա ընթերցողաց... Քանզի են բիւր կերակուրք ի վերայ յերկրի և ոչ ոք ի նոցանէ բոնութեամբ մտանեն ի բերան, ասէ մերն Վանական Վարդապետն, նմանապէս և սա՝ կամողացն է և թէ գտցի ինչ ի սմա և ըստ կամաց ձերոց, տեառն շնորհօք և աշխատութեանս մերոց, իսկ պակասն և անյարմարն՝ իմում տկարութեանս է. ներել մաղթեմ զայն...»[19]։ Մեսրոպ Գանձակեցին 1754 թվականին եղել է նաև Բրուսայում և այնտեղ է ավարտել «Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Ներածութիւն Պորփիւրի» երկի մեկնությունը։

Մեսրոպ Գանձակեցու «Հին Ջուղայեցի Ստեփաննոս վարդապետի յաշակերտէն առ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն Հայոց» խորագրով բանաստեղծությունը 13 քառատողերից բաղկացած մի հազվագյուտ ներբող է, իմացաբանական, փիլիսոփայական բովանդակությամբ ուսուցողական, ճանաչողական մի երգ։ Այստեղ մարմնավորվում են մեծ իմաստասերի կյանքի ու գործունեության մի շարք գծեր։ Բանաստեղծը բնութագրում է Դավիթ Անհաղթի դերը՝ իբրև հայ փիլիսոփայական մտքի պատմության առաջնորդի, իբրև հին աշխարհի իմաստասիրական շնորհները, «տարածակեալ», «դժուարին» գաղափարները բացահայտողի, թարգմանչի, իբրև հայոց ազգի փիլիսոփա լուսավորչի.

Սապէս եղեալ հօրդ մերոյ սրբազան,
Լուսաւորիչ կրկին ցեղին հայկազեան,
Իմաստնական տառիւք հընգօք զանազան,
Պէրճացուցեր զմեզ գիտութեամբ մեծազան։
Բամեալ առ քեզ գումարեցեր քաջ արանց,
Ուշիմամիտ նրբահայեաց գերազանց,

---

19 Նույն տեղում, թ. 39ա։

Որովք լցեր փափաք սրտին սուրբ հարանց,
Լընուելով բերին նոցա թարգմանմանց։
Ոսոդելով ջուր արբուցեր բուսուցիչ,
Բանիւ քոյին տգէտ որդւոցս ուսուցիչ,
Մառախլապատ փակեալ մրտաց մեր լուծիչ,
Ցրրտասառոյց սրտից մերոյ ջեռուցիչ[20]։

Ուշագրավն ու առանձնահատուկն այն է, որ այս և նման երգերով XVIII դ. գրավոր բանաստեղծության նյութն ու պատկերային համակարգը վերափոխվում, հարստանում է։ Ազգի, հայրենիքի ազատության գաղափարները, սիրո և կարոտի տենչանքներն արտահայտող պատկերների հետ միասին հանդիպում ենք գիտության, փիլիսոփայության աշխարհականացման իրական ընթացքը ներկայացնող, հանճարեղ Դավիթ Անհաղթի կերպարը մարմնավորող քնարական պատկերների.

Պարտիզանման ծաղկայոլով բուրաստան,
Հոտ շատ ունակ ըստ շուշանի բուրեցան,
Գարնանաբոյս փունջ մանուշակ մեզ տուան,
Բուրմամբ հոտոյ ճաշակ մտացս մայլեցան։
Էկիր մրտեր ի պատերազմ ըստ քաջի,
Արքայակերտ մեծ քաղաքին Կոստանդի,
Դեղրն մահու, որ ծածկեալ էր բաժակի,
Ցանդիմանալ ցուցէր չարին Լևոնի։
Բանք քո մաքուր, յոյժ պատուական քան զակի,
Գետաքատակ հոսեալ ի քէն յատենի,
Ծածկեալ կորոյց թիւր իմացողն այլազգի,
Այն, որ անուամբ Վէճ Մելիտոս յորջորջի[21]։

Պատկերների յուրակերտ հյուսվածքի մեջ կերպարանք են առնում ավանդական, գրական զրույցներով մեզ հասած Դավիթ Անհաղթի կյանքի ու գործունեության բազմաթիվ հետաքրքրական էջեր. Աթենքի իմաստասերների մրցույթում նրա տարած հաղթանակի պատմությունը, Պիհոռնի, Մելիտոսի և Դավիթ Անհաղթի ու Մովսես Խորենացու միջև եղած իմաստասիրական վիճաբանության անցքերը և այլն, որոնք մեզ ծանոթ են XII—XIV դդ. ձեռագիր աղբյուրներից, բանաստեղծը օգտագործել է հմտորեն։ XVIII դ. փիլիսոփա Մեսրոպ Դանձակեցու վերոհիշյալ ներբողը հայոց ընդհանուր վերանորոգության շարժման, հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչման ու ինքնահաստատման ձգտումների գրական արձագանքն է.

Նախնի հարանց մերոց պըտուղ գերակայ,
Հիւսեալ ծաղկանց պատուականաց յարակայ,
Թագ և պսակ գլխոյն եղեալ Թորգոմայ,
Մեծդրդ Դաւիթ, պարծանք ազգիս մեր Հայկայ[22]։

---

20 Նույն տեղում, ձեռ. № 1745, թ. 2ա-բ։
21 Նույն տեղում, թ. 2բ-3ա։
22 Նույն տեղում, թ. 3ա։

Մեսրոպ Գանձակեցու այս բանաստեղծությունը, միաժամանակ, հին և նոր դարերի մտավոր զարթոնքի՝ X—XIV դդ. հայ վերածննդի և XVII—XVIII դդ. հայ վերանորոգվող կյանքի միասնացած շունչն ունի իր մեջ։

Դավիթ Անհաղթի անձի և գործի շուրջը ստեղծված նշված երգերով չեն որոշվում նրա փիլիսոփայության ազդեցության ոլորտները։ Մեծ իմաստասերի բարոյագիտական, ճանաչողական հայացքների ընդհանուր ազդեցությունը ակնբախ է նաև XVIII դ. գրական-քնարական, ուսուցողական բանաստեղծության վրա՝ առհասարակ։ Դավիթ Անհաղթի «Նմանութիւն Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան» նոր-պլատոնական, ճանաչողական հայացքը, աստվածանմանության խնդիրը, որն այնքան խոր ներդործություն է ունեցել Գրիգոր Նարեկացու բանաստեղծական հանճարի վրա և մեծ հետք թողել միջին դարերի հայ գրականության մեջ, արտահայտվում է նաև XVIII դ. վերանորոգության շարժման գործիչների երկերում։ Մարդու երևակայությամբ ստեղծված ամենակատարյալի օրինակով, մարդուն կատարելության հասցնելու, բանական էակի իմացական-զգացական հատկությունների, հոգու և մարմնի հարաբերությունների չափը որոշելու, իրերի աշխարհը ճանաչելու, հասարակության մեջ մարդու տեղը որոշելու անհաղթյան և նարեկացիական հայացքները վերարծարծվում են յուրովի։ Այս առումով շատ ուշագրավ է Պետրոս Նախիջևանցու. «Աղօթականք բանք ընդ Աստուծոյ ի խորոց սրտի, սրտաբէկ զղջմամբ» քնարական մեծածավալ պոեմը, ուր հեղինակը Դավիթ Անհաղթի և քրիստոնյա հայրերի իմացաբանական ուսմունքի հետքերով, Գրիգոր Նարեկացու «Մատեանի» անմիջական ազդեցությամբ վերստին բարձրացնում է մարդու կատարելության, աստվածանմանության պրոբլեմը և այդ հիմքով բացահայտում ժամանակակից հոգևորականության արատներն ու թերությունները։

Անհրաժեշտ է շեշտել, որ ճանաչողական, իմացական վերաբերնացող ուսմունքը՝ կյանքի գործնական պահանջների, իրական հարաբերությունների թելադրանքով, միավորում է XVIII դ. հայ հասարակական մտքի տարբեր թևերի, կրոնական տարբեր դավանանքների առաջադեմ, հայրենասեր մարդկանց։ Ճշմարիտ քրիստոնյա նա է, դրում է հայ ազատագրական պայքարի գործիչ ու տեսաբան Հովսեփ Էմինը, ո՛վ չի համակերպվում, ո՛վ մաքառում է, ո՛վ չի կարծում, թե մահմեդականության տիրապետությունը հավիտենական է. մի բանական էակ չի հանդուրժի իրեն հոժարակամ ստրուկը լինել ուրիշի[23]։ Նույն գաղափարն է ընկած Շահամիրյանների քաղաքական ծրագրի հիմքում։ Հայոց պետականության անկման պատմական պատճառներին անդրադառնալով, «Նոր տետրակ, որ կոչի Ցորդորակ» նշանավոր գրքի հեղինակները, մեջբերելով Դավիթ Անհաղթի «Զարն ոչ է անեղ» հայտնի տեսության համապատասխան քաղվածքներ, կոչ են անում հայությանը միասնաբար, մեր նախնիների հերոսական կյանքի պատմությունը աչքի առաջ ունենալով, դիմադրել չարին՝ թշնամուն, գիտության, լուսավորության ճանապարհով հասնել բաղձալի աղատության[24]։

---

23 «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», Բեյրութ, 1958, էջ 323։

24 «Նոր տետրակ, որ կոչի Ցորդորակ», Մադրաս, 1772, էջ 181—182։

Ազգային ինքնաճանաչման նույն կոչը մեզ ծանոթ է նաև Պաղտասար Դպրի, Ղազար Ջահկեցու, Պետրոս Ղափանցու, Պետրոս Նախիջևանցու և այլոց երգերից։

Հայտնի է, գիտաճանաչողական բանաստեղծությունը ընթերցողին գեղարվեստական բավականություն կամ հաճույք պատճառելու խոստումներ չի անում։ Նրա դերը գերազանցապես ուսուցողական է, ոտանավոր ձևի և չափի, հանդի՛ ներդաշնակության մեջ, պարզից ամենաբարդ գաղափարների, գիտելիքների մատուցումը։ Ինչպես նկատեցինք, XVIII դ. դիտափիլիսոփայական բանաստեղծությունը և առհասարակ ողջ միջնադարյան գիտական-ուսուցողական բանաստեղծությունը ճանաչողական արժեք ու նշանակություն ունեն։ Կրթություն, լուսավորություն, դա էր հայոց մաքառողական շարժման հիմնական նախապայմանը, այն սպեղանին, որ կարող էր փակել հայոց դարավոր բաց վերքերը։

Պետք էր հետադարձ քննական հայացք նետել հայոց անցյալին, վերականգնել անցած դարերի մաքառողական պայքարի ոճը։ Վաղուց ի վեր չկային անցած ժամանակների «առատաբուխ գիտունները, վարդապետները, չկար նրանց հոգեղմայլ ուսուցումը...»[25],— դառնացած բողոքում է Սիմեոն Երևանցին իր «Լուծմունք արտաքնոց» երկերի ժողովածուի առաջաբանում և ձեռնարկում է գրելու՝ «Ներածութիւն Պորփիւրի...», «Տասանց ստորոգութեանցն Արիստոտէլի», «Լուծմունք Պէրիարմենիաս գրոցն», «Համառօտ լուծմունք գրոցն Դուսքի, որ կոչի Գոյից բաժանումն» և այլ երկեր։

Ահա այս կարգի երկերն են նաև, որ նպաստում են XVIII դ. իմաստասիրական, փիլիսոփայական բնույթի բանաստեղծության զարգացմանը։ Դավիթ Անհաղթի և այլոց իմաստասիրական ինքնուրույն և մեկնողական երկերի ձեռագիր ընդօրինակությունների ու հրատարակությունների էջերում հանդիպում ենք փոքրածավալ՝ երկտող, քառատող, ութ կամ տասը տողանի բանաստեղծությունների, որոնցով հայ ընթերցողը որոշակի գաղափար է կազմում թե՛ գիտական, իմաստասիրական տվյալ երկի բովանդակության, թե՛ նրա հեղինակի մասին։ Դիտափիլիսոփայական բովանդակությամբ փոքրիկ բանաստեղծությունների մի ամբողջ շարք կարող են կազմել Պաղտասար Դպրի, Պետրոս Ղափանցու, Պետրոս Նախիջևանցու և Սիմեոն Երևանցու երկտող, քառատող բանաստեղծությունները.

Գիրք սահմանաց մեծին Դաւթի,
Հանուրց գիտնոց յոյժ պիտանի,
Տրպեալ ի մեր Թբլիսանի
Հազար հարիւր և ութսունի (1731)[26]։

Հաւաքումն սահմանաց՝
Հանգստութիւն սերտողաց,
Նաև այլ ինչ պիտանի
Թբլիսն իսկոյն գտանի»[27],—

գրում է Պաղտասար Դպիրը։

---

25 Մատենադարան, ձեռ. № 1917, թ. 4բ։
26 Պաղտասար Դպիր, Տաղիկներ սիրոյ և կարօտանաց, Երևան, 1958, էջ 183։
27 Նույն տեղում, էջ 259։

Մի նմանիր դու անբանից,
Այլև նոցին նըմանեաց,
Լեր հետևող իմաստութեան
Եւ իմաստնոց նըմանեաց[28],—

գրում է Պետրոս Ղափանցին։

Այսքան վիճմունք Մելիտոսի,
Տրամաբանեալ ընդ Մովսէսի,
Զորս Մելիտոս հարցաբանէր,
Արին Մովսէս պատասխանէր[29],—

գրում է դարձյալ Պաղտասար Դպիրը հայ ընթերցողի մեջ ընդմիշտ տպավորելու Մ. Խորենացու և հույն իմաստասեր Մելիտոսի միջև տրամաբանության հարցի շուրջ եղած վիճաբանության պատմությունը։ Սիմեոն Երևանցին հորդորում է մտածել, լինել Պորփյուրի նման. «միշտ գոլ պորփիւրապէս», քանի որ նրա փիլիսոփայությունը արտաքնապես իր սահմաններն ունի, իսկ ներքնապես անհուն է ու անսահման.

Ա՛ռդ, Պորփիւրոս այս շնորհալի,
Գոլով համայն իմաստիւք լի,
Արար զձայնս հնգեսին,
Կարճառօտ բանիւք նաև դիւրին։
Վերերևութքն են հունապէս,
Ներերևոյթք՝ անհունապէս,
Ապա մատչողաց այս հանդէս,
Պարտ է միշտ գոլ պորփիւրապէս...[30]։

Սիմեոն Երևանցին իր «Համառօտ լուծմունք գրոցն Արիստոտէլի տասանց ստորոգութեանցն. ծաղկաքաղ ի բանից գերիմաստիցն սրբոյ Դաւթի Անյաղթ փիլիսոփային» գրքի հետ կապված աշխատանքը նշանավորում է Արիստոտելին նվիրված 12 տողանոց բանաստեղծությամբ.

Արիստոտէլ միտն անզբաղ,
Բանասիրաց համեմիչ աղ,
Զընթրիս շնորհալիս կազմէ,
Եւ զմիտըս պարզս հրաւիրէ։

Ի յայս թէպէտ յոլովք բազմին,
Բայց սակաւ են, որք զմայլին,
Զի որոց ոչ գոյ զմիտ պարզեալ,
Յարտաքս հանեցին մերկ և քաղցեալ...[31]

---

28 Շուշանիկ Նազարյան, Պետրոս Ղափանցի, Երևան, 1969, էջ 351։
29 Սիմեոն Ջուղայեցի, Գիրք տրամաբանութեան, Կ. Պոլիս, 1728, էջ 275։
30 Մատենադարան, ձեռ. № 1826, թ. 72բ, 73ա։
31 Նույն տեղում, թ. 103ա։

Պետրոս Նախիջևանցին Արիստոտելի «Վերլուծութեան» (Դավթի մեկնաբանության հիման վրա) իր մեկնությունը ավարտում է «Պետրոս» հոդակապով մի բանաստեղծությամբ, ուր այդ երկը դիտում է իբրև «շաւիղ ճշմարտութեան», «աստղ վերուղղական», «մտքի, գործի ուղեցոյց, տարակուսանքների փարատիչ».

Պայծառութիւն մտաց մարդկան,
Երրորդ հատորն վերլուծական,
Տարփացողաց գոլ տրամաբան,
Բամից լնու զարդար բաղձան։
Ուստի ի երկս սորին երկան
Սիրով լծեա զքեզ դիր և ջան,
Զի սա է աստղ վերուղղական.
Ցայնց, որք ի ծովս կարծեաց ծփան,
Ուղղէ զմիտս թափառական,
Ցուղիղ շաւիղ ճշմարտութեան[32]։

Դավիթ Անհաղթի ժառանգության հետ հարակցվող վերևում հիշված ինքնուրույն և մեկնողական երկերի ու բանաստեղծությունների հանգամանալից ուսումնասիրությունը (նոր ժամանակների լուսավորական ընդհանուր շարժման և հայոց անցյալի դասական դիտության ու մշակույթի հետ ունեցած կապի մեջ) տեսանելի կդարձնի վերոհիշյալ գործիչների հայացքների ընդհանուր այն կետերը, որոնք միացնում են նրանց, և տարբերիչ այն գծերը, որոնք նրանց բաժանում են միմյանցից իբրև հայ հասարակական միտքը շարժող տարբեր հոսանքների ներկայացուցիչների։

ДАВИД НЕПОБЕДИМЫЙ И АРМЯНСКАЯ ПОЭЗИЯ XVIII ВЕКА

ШУШАНИК НАЗАРЯН

Резюме

До нас дошли тысячи рукописных реликвий, представляющих философское наследие Давида Непобедимого. Учение гениального мыслителя переживало особый расцвет в X—XIV вв. и получило признание также в XVII—XVIII вв.

Велико было влияние наследия Давида Непобедимого на литературную жизнь XVIII века. Примером такого влияния является поэзия Хачатура Эрзрумеци, Багдасара Дпира, Месропа Гандзакеци, Симеона Ереванци, Петроса Капанци, Петроса Нахиджеванци и других.

---

32 Նույն տեղում, թ. 298ա։